

Համայնքային Այգիների Վերաբացման Արձանագրություն

Վերջին թարմացումներ.

12/2/20.

- Խցիկներում աշխատող աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն՝ ներառյալ միջնապատերով հագեցած խցիկներում: Սա ժամանակավոր միջոց է՝ համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ժամանակավոր ՀՐԱՄԱՆԻ, որը տրվել է 2020 թ.-ի Նոյեմբերի 28-ին: Պահանջը ուժի մեջ է 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12:01-ից (PST) մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 11:59-ը (PST):
- Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն և հնարավորության դեպքում դա իրականացնեն դրսում: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը:
- Այցելուների ստուգումը պետք է ներառի այցելուի՝ ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո գտնվելու ստուգումը:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (Հանրային Առողջապահություն) կոչ է անում հասարակությանը, բոլոր գործարարներին և հանրային կազմակերպություններին աջակցել բիզնեսների և հանրային վայրերի վերաբացմանը: Մեր համատեղ «Ավելի Անվտանգ Է Տանը» հրամանի ջանքերով մեզ հաջողվեց արդյունավետորեն նվազեցնել նոր տիպի կորոնավիրուսի՝ COVID-19-ի նոր վարակվածության և հոսպիտալացման դեպքերը՝ հնարավորություն ստեղծելով առօրյա կյանքի մի շարք ոլորտների փուլային վերաբացման համար:

Անցումային այս փուլին օժանդակելու նպատակով՝ Հանրային Առողջապահությունը խնդրում է բոլոր համայնքային այգիների վերահսկիչներին՝ ձեռնարկելու համապատասխան քայլեր վերաբացման գործողությունների պլանավորման ուղղությամբ՝ համաձայն Վերականգնման Ծրագրին: Հետևյալ խնդիրներն առաջնային են և պետք է լուծվեն բոլոր աշխատակիցների և գործող անձանց կողմից՝ համայնքային այգիներում վարակի տարածման վտանգի կանխարգելման նպատակով.

- (1) Պաշտպանել և ապահովել աշխատակիցների և հաճախորդների առողջությունը
- (2) Ապահովել պատշաճ սոցիալական հեռավորություն
- (3) Ապահովել վարակի տարածման պատշաճ կառավարում
- (4) Պահպանել հասարակության հետ հաղորդակցություն
- (5) Ապահովել ծառայությունների հավասար հասանելիություն

Այս կարևոր տարածքները ներառվել են ներքոհիշյալ աղյուսակում և պետք է իրականացվեն՝ ըստ Համայնքային Այգիների Վերաբացման Արձանագրությունների պահանջների:

Բոլոր Համայնքային Այգիները պետք է իրականացնեն ներքևում նշված բոլոր կիրառելի միջոցները և պետք է պատրաստ լինեն հիմնավոր բացատրություն

Ներկայացնելու որևէ քայլի անիրագործելիության դեպքում:

Համայնքային Այգու անվանումը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Ա. ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐ

- Բոլոր պայմաններում պարտադիր է կրել պաշտպանիչ դիմակներ: Այգի ժամանող այցելուներին պետք է հիշեցնել, որ դեմքի ծածկոցներ կրեն հաստատությունում և դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում, (բացառությամբ՝ ուսուցիչ կամ խմելու, եթե կիրառելի է): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ մասնակիցների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:
- Իրականացվում է ախտանիշների ստուգումներ՝ նախքան այցելուներին կամ մասնակիցներին կթույլատրվի տարածք մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, **ինչպես նաև ստուգում արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:** Այս ստուգումները կարող են իրականացվել հեռավար անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, ինչպիսիք են ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված **ցուցանակների** միջոցով, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է մուտք գործեն տարածք:
- Բոլոր պայմաններում պահանջվում է 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- Արգելված են կամավոր և այլ միջոցառումները, ինչպես նաև դասընթացները:
- Արգելված են խմբակային հավաքույթները:
- Այգում միաժամանակ գտնվող անձանց թիվը չի կարող որևէ բազմությունն առաջացնել, և մասնակիցների միջև պետք է պահպանվի 6 ոտնաչափ հեռավորություն:
- Մասնակիցները կրում են ձեռքերի ախտահանիչ լուծույթներ կամ ախտահանիչ անձեռոցիկներ կամ ունեն օճառաջրով լի զիփ փականով պայուսակներ և սրբիչներ և լվանում են ձեռքերը այգի այցելելուց առաջ և հետո:
- Այգեգործական աշխատանքների ժամանակ պահանջվում են ձեռնոցներ, ներառյալ՝ գործիքներն ու սարքավորումները բեռնաթափելիս:
- Մասնակիցները պարտավոր են ձերբազատվել բոլոր անձնական պարագաներից և աղբից՝ նախքան այգուց հեռանալը:
- Դռները, մուտքերը, և/կամ դարպասները մնում են բաց՝ սովորական աշխատանքային ժամերին:

Աշխատակիցների կամ անձնակազմի ներկայության պայմանները.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆ

- Բոլոր աշխատակիցները տեղեկացված են չգալ աշխատանքի հիվանդության կամ COVID-19-ով վարակակիր անձի հետ շփման դեպքում: Աշխատակիցները գիտակցում են անհրաժեշտության դեպքում հետևելու Հանրային Առողջապահության Վարչության ուղեցույցին ինքնամեկուսացման և կարանտինի համար: Աշխատանքային կանոնակարգերը վերանայվել են և ենթարկվել փոփոխությունների, որպեսզի հիվանդության պատճառով աշխատանքից բացակայելու դեպքում աշխատակիցները խուսափեն տույժերից:
 - Տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկությունների՝ հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական [ծրագրերի](#) և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների, ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների Կորոնավիրուսի Առաջին Արձագանքի Օրենքի ներքո](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և COVID-19-ին առնչվող աշխատանքների մասին տեղեկատվություն համաձայն՝ Նահանգապետի [N-62-20 Գործադիր Հրամանի](#) վերաբերյալ:
- Մեկ կամ ավելի աշխատակցի մոտ COVID-19-ի թեստավորման դրական պատասխանի կամ նոր տեսակի կորոնավիրուսային ախտանշանների առկայության դեպքում գործատուն ունի հստակ գործող ծրագիր կամ կանոնակարգ՝ ըստ որի վարակված անձը /անձիք պետք է [տանը ինքնամեկուսանան](#), և պահանջի նաև, որ նրա(նց) հետ շփում ունեցած աշխատակիցները [կարանտինում](#) մնան: Գործատուի ծրագիրը ներառում է COVID-19-ի թեստավորման հասանելիություն բոլոր ինքնամեկուսացված աշխատակիցների համար՝ պարզելու նրանց շփման շրջանակը և ինքնամեկուսացնելու անհրաժեշտությունը, որը, իր հերթին, կարող է հանգեցնել նոր թեստավորումների և վարակի տարածման կանխարգելման հետագա քայլերի կիրառմանը: Տես՝ Հանրային Առողջության ուղեցույցը՝ [COVID-19-ին աշխատավայրում արձագանքելու վերաբերյալ](#):
- Իրականացվում են [ստուգումներ](#)՝ նախքան նրանց կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը նախորդ 14 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված մարդու հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի դեպքեր բացահայտելու դեպքում, գործատուն պետք է զեկուցի այս բռնկումը Հանրային Առողջապահության Վարչություն՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարով: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվում, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է՝ վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետագոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆ

- Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքև եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միյան նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կգակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ ամուր միջնապատերով առանձնացված աշխատախցում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Խցիկներում աշխատող աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն՝ ներառյալ միջնապատերով հագեցած խցիկներում: Սա ժամանակավոր միջոց է՝ համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ Ժամանակավոր ՀՐԱՄԱՆԻ, որը տրվել է 2020 թ.-ի Նոյեմբերի 28-ին: Պահանջը ուժի մեջ է 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ի առավոտյան ժամը 12:01-ից (PST) մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 11:59-ը (PST):
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ ընդմիջումների ժամանակ, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը:
- Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ դեմքի կտորե դիմակները:
- Աշխատակիցներին հիշեցվել է պահպանել անձնական կանխարգելման գործողությունները, ներառյալ.
 - Մալ տանը, եթե հիվանդ եք:
 - Մալ տանը ապաքինվելուց հետո առնվազն 24 ժամ, ինչը նշանակում է, որ ձեր ջերմությունն իջել է առանց ջերմիջեցնող միջոցների կիրառության և ձեր ախտանիշները բարելավվել են (օրինակ՝ դադարել է հազը, դժվարացած շնչառությունը) ԵՎ ձեր ախտանշանների առաջացման օրվանից անցել է առնվազն 10 օր:
 - Եթե ձեր COVID-19 թեստի արդյունքը դրական է, բայց դուք երբեք որևէ ախտանիշներ չեք ունեցել, դուք պետք է մաքր տանը, մինչև՝
 - Առաջին դրական թեստից հետո 10 օր, բայց
 - Եթե ձեզ մոտ ախտանիշներ զարգանան, դուք պետք է հետևեք վերոնշյալ ցուցումներին:
 - Հաճախ լվանալ ձեռքերը օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան տևողությամբ: Օճառի և ջրի բացակայության պայմաններում կիրառել ալկոհոլային հիմքով ախտահանիչ լուծույթներ՝ առնվազն 60% ալկոհոլային բաղադրությամբ: Լվանալ ձեռքերը ուտելուց առաջ, լոգարանից օգտվելուց, ինչպես նաև՝ հազալուց և փռշտալուց հետո:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆ

- Հազալիս և փոշտալիս ծածկել դեմքը անձեռոցիկով և հետո անձեռոցիկը նետել աղբամանը և անմիջապես լվանալ ձեռքերը: Անձեռոցիկի բացակայության դեպքում ծածկել երեսը արմուկներով (ոչ թե ձեռքով):
- Չդիպչել բերանին, աչքերին, կամ քթին չլվացված ձեռքերով:
- Խոլսափել հիվանդ մարդկանց հետ շփումից:
- Խոլսափել իրերի համատեղ օգտագործումից, ինչպիսիք են՝ հեռախոսը կամ այլ սարքավորումները: Եթե ստիպված եք սարքավորումները համատեղ օգտագործել, մաքրեք դրանք ախտահանիչ անձեռոցիկով հանձնելուց առաջ և վերցնելուց հետո:
- Հաճախակի դիտարկեք ձեր ֆիզիկական հեռավորությունը այլ աշխատակիցներից: Միշտ պահպանեք 6 ոտնաչափ հեռավորությունն այլ անձանցից, իսկ նրանց հետ համատեղ աշխատանք կատարելու կամ նրանց մոտ գտնվելու դեպքում կրեք կտորե դիմակ:
- Ախտահանեք հաճախ շոշափված առարկաները և մակերեսները, ինչպիսիք են աշխատատեղերը, ստեղնաշարերը, հեռախոսները, շարժասեղանները, մեքենաները, ընդհանուր սարքերը և դռների բռնակները: Այս գործողությունը պետք է իրականացնել ամեն ժամ աշխատանքային օրվա ընթացքում:
- Սույն արձանագրության օրինակները բաժանվել են բոլոր աշխատակիցներին:

Բ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խմբակային հավաքույթները արգելված են, ուստի նստարաններն ու սեղանները հեռացվել կամ պահվել են, քանի որ դրանք չի կարելի օգտագործել:
- Հաճախակի օգտագործվող իրերը պարբերաբար ախտահանվում են:
- Ընդհանուր օգտագործման սարքավորումներն ախտահանվում են յուրաքանչյուր կիրառումից առաջ և հետո:
- Մասնակիցները հնարավորության սահմաններում իրենց հետ բերում են իրենց անձնական օգտագործման պարագաները՝ ընդհանուր օգտագործման պարագաներից օգտվելուց խոլսափելու համար:
- Ջրի աղբյուրները հասանելի են միայն շշերը ջրով լցնելու նպատակով:

Գ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վարակի կանխարգելման, ֆիզիկական հեռավորության պահպանման և դիմակների անհրաժեշտության մասին տեղեկատվական և ուսուցողական ազդագրերը պետք է տեղադրվեն ամբողջ տարածքում:
- Հաստատության վերահսկողը ամեն օր պետք է իրականացնի մշտադիտարկման կանոնավոր այցեր՝ համոզվելու, որ այգեպանները պահպանում են սահմանափակման կանոնները:
- Վերոնշյալ սահմանափակումների չպահպանման դեպքում այգեպաններին կառաջարկվի հեռանալ:

**Ցանկացած հավելյալ միջոցառումներ, որոնք նշված չեն սույն փաստաթղթում,
պետք է նշվեն առանձին էջերին և կցվեն սույն փաստաթղթին գործարարների
կողմից:**

**Արձանագրության վերաբերյալ հետագա հարցերի և մեկնաբանությունների
համար կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ՝**

Համայնքային

Այգու

**Կոնտակտային
անձ՝**

Հեռախոսահամար՝

Վերջին

**վերանայման
ամսաթիվը՝**